600.0020.31.01.18

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 հունվարի 2018 թվականի №20Ա
քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 12-Ի №316Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը և հաշվի առնելով «ՍՈԼԱՐ ՓՐՈԴԱԿՇՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2017 թվականի դեկտեմբերի 20-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի հուլիսի 12-ի «ՍՈԼԱՐ ՓՐՈԴԱԿՇՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Թալին-1» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №316Ա որոշման 2-րդ կետով հաստատված ԼԷ №0607 լիցենզիայի պայմանների՝

   1) 6-րդ կետում «999» թիվը փոխարինել «960» թվով,

   2) 7-րդ կետում «3700» թիվը փոխարինել «3696» թվով:

2. «Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերությանը հարյուր հազար դրամ գումարի չափով ազատել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացված 2017 թվականի

հունիսի 26-ի №COD/0596 երաշխիքի համաձայն ստանձնած երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ գումարի երաշխիքային պարտավորությունից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՍՈԼԱՐ ՓՐՈԴԱԿՇՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
31 հունվարի 2018թ.